ՄԱՐԴՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆԳԵՂՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեծ Հայքի հայ Արշակունիների թագավորության պետական կարգի վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանվել են արժեքավոր տեղեկություններ։ Հայկական վաղ ավատատիրական պետության գլուխ կանգնած էր Արշակունի գահակալը, որը կոչվում էր «թագաւոր Հայոց Մեծաց»։ Հայոց արքունիքը գործադիր իշխանությունն իրականացնում էր գործակալությունների միջոցով։ Չնայած դրանց մեծ մասը ձևավորվել էր դեռևս մ. թ. առաջ, երբ Հայաստանում գոյություն ուներ ստրկատիրական կենտրոնացված պետություն, գործակալությունները զգալի փոփոխություններ կրեցին ավատատիրության շրջանում՝ կապված իրենց գործունեության շրջանակների և իրավասության հետ։ Այսպես, սպարապետությունը, որ սկզբնական շրջանում սովորական գործակալություն էր, Վաղարշ II-ի օրոք, երբ Հռոմը Մեծ Հայքի թագավորության վրա դրեց կովկասյան լեռնանցքների պաշտպանությունը[1], *ետին պլան մղեց մյուս գործակալություններին, իսկ սպարապետը դարձավ պետության մեջ երկրորդ անձնավորությունը*[2]։ *Մեծ Հայքի թագավորության կարևոր գործակալություններն էին սպարապետությունը, հազարապետությունը, մեծն դատավարությունը, մաղխազությունը, հայրությունը կամ մարդպետությունը, թագադիր ասպետությունը։ Գոյություն են ունեցել անշուշտ նաև այլ, նվազ կարևոր գործակալություններ, որոնցից մի քանիսը սկզբնաղբյուրներից մեզ հայտնի են, իսկ մյուսները՝ ոչ։ Յուրաքանչյուր գործակալ իր կատարած վարչական աշխատանքի կամ ռազմական ծառայության համար որպես վարձատրություն կամ «ուտեստ» ստանում էր որոշակի շրջան կամ գավառ, որն ի տարբերություն ժառանգական տիրույթների, կոչվում էր «ձեռական երկիր» կամ «երկիր ձեռական իշխանութեան»։ Արդեն անվանումն իսկ խոսում է այն մասին, որ գործակալը կարող էր այդ կալվածքի եկամուտից օգտվել այնքան ժամանակ, քանի դեռ գտնվում էր ծառայության մեջ։ Գործակալությունը մեկ այլ անձի հանձնելու դեպքում «ձեռական երկիրն» անցնում էր նոր պաշտոնյային։ Սակայն ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով գործակալությունները դարձան որոշակի իշխանական տոհմերի ժառանգական արտոնությունը, որի հետևանքով «ձեռական երկիրը» գործնականում վերածվում էր ժառանգականի և միավորվում գործակալ-նախարարի ժառանգական կալվածներին։ Չնայած որոշ շեղումներին, այդ կարգն Արշակունյաց թագավորության գոյության ողջ ընթացքում հիմնականում կայուն էր, քանի որ հայոց թագավորները միշտ չէ, որ կարող էին և պատրաստ էին համարձակ քայլերի դիմել, առանց վախենալու վրդովել երկրի երևելիական անդորրությունը։ Հենց այդպիսի վճռականության զոհ դարձավ հայոց Պապ թագավորը, որը նախարարների կարծիքով չափից ավելի էր խախտում «կարգը»։*

Մեծ Հայքի թագավորության գործակալությունների մեջ առանձնահատուկ տեղ ուներ հայրության կամ մարդպետության գործակալությունը, որի մասին

---

1 *Ս. Տ. Երեմյան, Վաղարշ II-ի քաղաքական հարաբերությունները Հռոմի և պարթևների հետ («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 4, էջ 45)։*

2 *Ակադ. Ս. Երեմյանի կարծիքով սպարապետությունը որպես գործակալություն հանդես եկավ մ. թ. II դարում, որը հավանական չէ («Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 829)։*

Պատմահայրը գրում է. «.Եւ գունդս և պահապանս դրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի հին ի զարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս։ Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, այլս ոմանս յարուցեալ գունդս և ոստան անուանեալ. ոչ գիտեմ թէ վասն սպառելո՞յ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք չկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի։ Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ ՍէփէՀՕուն կոչի[3]։ Նա և ներքինիս հրամայէ ի նոյն ազգէ խզել. և նաՀապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցուուշ և ցնախնաւան, և նաՀապետութեան ազգին սա մեծարոյ։ Բայց թէ որպէս կամ ուր սորա իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ»[4]։

Ինչպես դժվար չէ եզրակացնել Մովսես Խորենացու այս հաղորդումից, առաջին ներքինապետը սերում էր հին թագավորական զարմից՝ Հայկի սերնդից, և նրա կառավարմանն էին հանձնված Ատրպատականի սահմաններից մինչև Ճուաշ և նախճավան գավառներն ընկած հողերը։ Պատմահայրը ներքինապետին կոչում է «Հայր», իբրև հատուկ անուն, բայց, ինչպես ցույց է տալիս Ստ. Մալխասյանցը, «Հայրը» ընդհանուր մակդիր էր բոլոր ներքինապետների համար, որ անգամ թուրքերը ներքինապետներին կոչում էին բաբա (=հայր)[5]։ Մարդպետությանը համարժեք գործակալությունը, որի խնդիրն էր արքունի գանձարանների պահպանությունը, հայտնի էր հելլենիստական աշխարհում։ Գործակալության գլուխ կանգնած պաշտոնյան կոչվում էր γαζοφύλακος—գազոֆիլակոս[6]։ Բնական է ենթադրել, որ հելլենիստական աշխարհի ոլորտն առնչված Մեծ Հայքի թագավորությունում ևս այդ գործակալությունը գոյություն ուներ և կոչվում էր «հայրութիւն»։ Պարթև Արշակունիների հարստության կրտսեր ճյուղի՝ Մեծ Հայքի թագավորությունում հաստատվելուց հետո այդ գործակալությունը հանձնվում է մարդ ցեղի առաջնորդներին։ Անդրադառնալով սույն խնդրին, Ս. Երեմյանը գտնում է, որ Տրդատ Ա-ի կամ նրա հաջորդների օրոք «հայրութիւնը» դառնում է մարդ ցեղի ցեղապետ-նահապետի ժառանգական արտոնությունը, իսկ քանի որ ցեղապետը կոչվում էր մարդպետ, գործակալությունն էլ ստացավ «մարդպետութիւն» անունը[7]։ Մեծարգո հայագետի կարծիքով մ. թ. առաջին դարերում մարդերը դեռ լրիվ չէին դուրս եկել ռազմական դեմոկրատիայի ատիճանից, և նրանցից կազմված «մարդպետական գունդը» պիտի քաջ կռվողի համբավ ունենար[8]։ Մարդերի ցեղային կազմակերպության շնորհիվ գործակալությունը դարձավ ցեղային ներքինացվող առաջնորդների մենաշնորհը երկար ժամանակով, որի հետևանքով «հայրութիւն» և «մարդպետութիւն» հասկացությունները դարձան համարժեք, իսկ գործակալն էլ սկսեց կոչվել պարզապես «Հայր մարդպետ»։

---

3 ՍեփեՀՕուը վրացերեն բառ է. բաղկացած սեփէ (թագավոր) և ՀՕուի (որդի) բառերից և նշանակում է արքայորդի, արքայազարմ։ Ըստ Ն. Մառի («Հանդես ամսօրյա», 1892, էջ 165) վրացերեն սեփէ=նեփէ=մեփէ բառը, որ նշանակում է թագավոր, ծագում է հայոց սեպուհ բառից «ու» հնչյունի կորստով՝ սեպ(ու)հ=սեպհ=սեփե (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 342, ծան. 84)։

4 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 111—112 (այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են—Բ. Հ.)։

5 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, էջ 342—343, ծան. 85։

6 С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1948, № 11, էջ 70).

7 «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 832։

8 Նույն տեղում, էջ 833։

Մարդպետության կամ մարդպետական իշխանության մասին տեղեկություններ են պահպանվել Կղավդիոս Պտղոմեոսի երկում, ըստ որի Γορδυηνή—Կորդուք և Κωστία—Կորճա՞ն աշխարհների հարևանությամբ գտնվում է Μαρδυ-ն[9]։ Մեծ Հայքի պտղոմեոսյան և աշխարհացույցյան նկարագրությունների համակողմանի քննությունը պարզորոշ ցույց է տալիս, որ Μαρδυ-ն նույնական է Մարդպետական[10] կամ «Մարդպետութիւն» իշխանությանը։ Ուստի, քանի որ պտղոմեոսյան նկարագրությունը վերաբերում է մ. թ. II դ. կեսերին, Մարդպետական իշխանությունը պետք է ստեղծված լիներ մինչ այդ։ Պլինիոս Ավագի տվյալներով Մեծ Հայքում կար 120 ստրատեգիա[11], հետևաբար Մարդպետականի ստեղծումը պետք է ենթադրել մ. թ. I դ. երկրորդ կեսից ոչ շուտ։ Պլինիոս Ավագն իր երկը ստեղծել է 71—77 թթ. ընթացքում, որը համապատասխանում է Տրդատ Ա-ի իշխանության տարիներին (66—88)։ Տրդատ Ա-ից մինչև II դ. կեսերն ընկած ժամանակահատվածում նշանավոր դեմքեր չկան, ուստի առավել հավանական է կարծել, որ վարչական խոշոր վերափոխությունները կատարվել էին Արշակունյաց առաջին գահակալի օրոք։ Եթե անգամ ընդունենք, որ վարչական կարգավորումը կատարվել էր նրա գահակալության առաջին տարիներին, Պլինիոս Ավագը կարող էր և տեղեկությունների պակասի պատճառով չիմանալ դրանց մասին, որովհետև նրա մոտ Հայաստանի և Այսրկովկասի մասին նյութը վերաբերում է 30—40-ական թվականներին։

Մարդերը որպես իրանական ցեղ հավանաբար վայելում էին Արշակունի առաջին գահակալների հովանավորությունը, որի արտահայտությունն էր «Հայրութիւն» պաշտոնի նրանց հանձնումը։ Սակայն մարդերի ցեղը շուտով՝ որպես առանձին էթնիկ տարր, անհետացավ հայկական միջավայրում, հայացան նաև պարթև Արշակունիները, որի հետևանքով «մարդպետութիւն» գործակալության անպայման հանձնումը մարդ ցեղի նահապետին բնականոն ճանապարհով ի չիք դարձավ։ Ուստի ավելի ուշ շրջանում, ինչպես ցույց են տալիս սկզբնաղբյուրները, հայոց արքունիքը այդ պաշտոնը իր հայեցողությամբ հանձնում էր այս կամ այն ազնվականին։ Ինչպես ցեղային գոյության, այնպես էլ հետագա շրջանում, արքունիքը հաշվենկատ ձևով Մարդաստան կամ ըստ Սեբեոսի Մարդուցայք գավառը[12] չէր մտցնում Հայր-մարդպետի իշխանությանը հանձնված տիրույթների մեջ։ Այն միտքը, թե Հայր-Մարդպետի «ձեռական իշխանութեան» տարածքը պիտի լիներ Նախճավան քաղաքն իր գավառով[13], անհավանական է, որովհետև «Աշխարհացույց»-ի քննությունը պարզում է, որ Նախճավանը Վասպուրականի մեջ է մտցվել անհամեմատ ուշ, իսկ ըստ Պատմահոր՝ Մարդպետական իշխանությունը տարածվել է մինչև Նախճավան և Ճուաշ։ Նախճավանի՝ մարդպետներին պատկանելու կամ չպատկանելու խնդիրը հարցի մի կողմն է, որովհետև Մարդպետական իշխանությունն իր ողջ գոյության ընթացքում եղել է «ձեռական իշխանութիւն» և ներքինիներով կառավարվելու պայմաններում երբեք էլ չէր կարող վերածվել ժառանգական տիրույթի։

---

[9] „Claudii Ptolemaei Geographia", Voluminis Primi, pars, secunda, Parisiis, 1901, էջ 947։

[10] Մարդպետների իշխանությունը Մարդպետական անունով հիշվում է միայն Գրիգոր Մագիստրոսի՝ Մարգիս վարդապետին ուղղված թղթում. «Աղէ հարցիր ընդ բոլոր Ցարմնեաց նահանգի. զինչ յատուս յայսոսիկ ի բոլոր տանս Մարդպետական եղեալ գործառնութիւնս» («Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, էջ 65)։

[11] „Plinii Naturalis Historia" („The classical Library", London, 1969, Liber VI, X).

[12] Ակադ. Ս. Երեմյանը միանգամայն իրավացիորեն Պտղոմեոսի երկում հանդիպող Ματουστάνα—Matustana տեղանունը (Ptol., V, 12, 7) սբրագրում է Μα[ρ]τουστάνα և նույնացնում Մարդաստան-Մարդուցայքի հետ («Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 833)։

[13] Նույն տեղում, էջ 833։

Ղ. Ինճիճյանի կարծիքով մարդպետներին ներքինացրել են հեթանոս թագավորների օրոք, իսկ քրիստոնյա գահակալների ժամանակ այդ սովորությունը չի գործել։ Իր ենթադրությունը հաստատելու համար նա վկայակոչում է Դրաստամատ իշխանի քաջությունը, որն ըստ նրա ներքինիներին հատուկ չէ[14]։ Հայ պատմիչների տեղեկությունները հերքում են նման հայեցակետը, իսկ քաջության առկայությունը բնավ էլ հուսալի կռվան չէ ներքինությունը ժխտելու համար։ Պարսից Աղա-Մահմեդ խանը ներքինի էր, բայց ոչ ոք նրան չէր կարող մեղադրել վախկոտության մեջ։ Ներքինիության հաստատությունը, որ կար քրիստոնյա Բյուզանդական կայսրությունում, անուղղակիորեն գալիս է հաստատելու հայկական սկզբնաղբյուրների վկայությունները։ Այսպես, Փավստոս Բուզանդը տեղեկացնում է, որ Տիրանի իշխանության տարիներին գործած մարդպետը «...ունէր զպատիւն մեծի մարդպետութեան, այր ներքինի՝ չարաստիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին»[15]։ Հիշյալ Հայր-մարդպետը որպես ներքինի հիշվում է Դ դպրության 14-րդ գլխում. «սկսաւ ներքինին խօսել բանս հպարտս և ամբարտաւանս...»[16], իսկ Ե դպրության է գլխում ասված է. «...Եւ քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում հայրն կոչէին ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ...»[17]։

Քննության առնելով սկզբնաղբյուրները, ակադ. Հ. Մանանդյանը եզրակացրել է, որ մարդպետներին հանձնարարված է եղել Արշակունիների կանանոցի և արքունիքի վերակացությունը, թագավորական ամրությունների և բերդերի պահպանությունը և արքունի գանձերի ու կալվածների վերահսկողությունը[18]։ Հայր մարդպետի գործունեության շրջանակների և իրավասության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել «Զորանամակում» և Փավստոս Բուզանդի երկում։ Ավելորդ չենք համարում հիշյալ վկայությունները մեջբերել ամբողջությամբ. «...Եւ զոմանս ի յայլ աշխարհս գրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ ազանց որ ընդ աղգաւք ԶԴ-ից հազարաց թող զսպասաւորս դրանն արքունի՝ որ է ոստանդ որք ի պատերազմ ելանէին ընդ ամրոյքայի եւ մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց՝ որ է հարիւր եւ քսան հազարաց»[19]։ «Եւ էր մարդպետն Հայր այր շար և ժանտաբարոյիւք անօրէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն մարդպետսն։ Ահա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի. և սոյնպէս առ թագաւորութեամբն Արշակայ՝ ևս շար քան զառաջին գործել շար առ ամենայն մարդ։ Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր մարդպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գեղսն տեսանել»[20]։ «Ապա մինչդեռ մարդպետն Հայր զիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի նմին գաւառին յիւրում բերդին՝ որում Ողական կոչեն, որ կայ ի վերայ Եփրատայ...»[21]։

---

14 Ղ. Ինճիճյան, Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 136—137։

15 «Փաւստոսի Բ'ուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 46։

16 Նույն տեղում, էջ 114։

17 Նույն տեղում, էջ 206։

18 Հակոբ Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Երևան, 1934, էջ 64։ Ծանոթ չլինելով «Զորանամակին», Ղ. Ինճիճյանը լոկ Փավստոս Բուզանդի տեղեկությունների համաձայն գտնում է, որ մարդպետի պարտականությունն էր լինել հայ թագավորի, նրա ապարանքի վերակացու և հազարապետ (Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 136)։

19 Н. Адонц, Армения в эпоху Юстиннана, СПб., 1908, с. 252.

20 Փավստոս Բուզանդ, էջ 113—114։ Մեսրոպ Վայոցձորեցին կաթողիկոսի և մարդպետի հանդիպումը դնում է Այրարատում («Սոփերք Հայկականք», Զ, Վենետիկ, 1853, էջ 41)։

21 Նույն տեղում, էջ 191։

Եվ իրոք, համաձայն առաջին տեղեկության, Հայր-մարդպետը հանդիսացել է կանանոցի գլխավոր և գանձերի պահապան, իսկ երկրորդ և երրորդ հաղորդումները նրան բնութագրում են որպես արքունի կալվածների, բնականաբար նաև արքունի բերդերի և ամրությունների վերակացու, որի անուղղակի վկայությունն ունենք Փավստոս Բուզանդի ներքոբերյալ հատվածում. «Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատն։ Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորին Պարսից, շարաշար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին։ Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի, որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Սոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն։ Եւ քանզի այս գործակալութիւն և մարդապետութիւն, որում հայրն կոչէին[22] ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ, և զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն վերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց»[23]։

Անդրադառնալով մեջբերված երկրորդ և երրորդ հատվածներին, Ղ. Ինճիճյանը և Նորայր Բյուզանդացին ենթադրել են, որ «շրջէր ընդ մարդպետութիւնն իւր» և «զիւրով իշխանութեամբ շրջէր» արտահայտությունները պետք է ընկալել որպես հաղորդումներ՝ Տարոնում մարդպետական սեփական տիրույթների գոյության մասին[24]։ Այս տեսակետը, անկասկած, ընդունելի չէ։ Ա. Գարագաշյանը, Հ. Մարքվարտը և Հ. Մանանդյանը իրավացիորեն ցույց են տվել, որ հիշյալ կալվածներն արքունի ոստանի մասերն էին, որոնք գտնվում էին մարդպետների տեսչության ներքո[25]։ Հարցը ամենից ընդունելի բացատրել է Հ. Մարքվարտը, որը գտնում է, որ Թովմա Արծրունու մոտ հիշատակված Վասպուրականի գավառները, որոնք ըստ պատմիչի համարվում էին մարդպետների կալվածքներ, իրականում հանդիսացել են արքունի տան երկրներ[26]։ Հարցի քննության մեջ հստակություն մտցնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում մեջբերել Թովմա Արծրունու վկայությունը. «Եւ զբոլոր երկիրս իւրեանց տէրութեանն բաժանեցին յերկուս մասունս։ Յելս կոյս եւ ի մուտս որ առ հիւսիսի զհայեցածն բերէ, առեալ էր ի բաժնէ Գագիկ իշխանի։ ԶՃուաշ գաւառն եւ զԹոռնաւան, Արտազ, Մարդաստան, Դառնի, Առբերանի, Աղանդ-ռոտ, Բառիլովիտ, Պալունիք եւ Մեծնունիք, Տոսպոշտունիք, Բոգունիք, Գուդան գաւառ Արտաշէսեան։ Այսոքիկ գաւառք անուանիք, զոր յառաջին ժամանակս իւրոյ իշխանութեանն սեփհականս իւր արարեալ ունէր հայրն նենգութեան Մարդպետն կոչեցեալ. զոր եւ վեր անդ յիշատակեալ ցուցաք զորպիսութիւն. եւ մանաւանդ քաղաքն Շամիրամայ հռչակելին եւ յոյժ փառաւորագոյնն յա-

---

22 Կետադրությունը փոխել ենք, որովհետև «ներքինեաց» բառի վրա բուժ դնելը իմաստը աղավաղում է։

23 Փավստոս Բուզանդ, էջ 205—206։

24 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 139, Նորայր Բյուզանդացի, Կորիւն և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1910, էջ 268։

25 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 7 և 20, J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, էջ 36, Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 64—65։

26 J. Markwart, Die Geneologie der Bagratiden („Caucasica", 1930, Fase. 6, 2. Teil. էջ 35։ Հ. Մանանդյանի առարկությունն այս հարցում, անհիմն է (նշվ. աշխ., էջ 65)։

մենայն կողմանց Վասպուրականի»[27]։ Հպանցիկ ուսումնասիրությունն անգամ պարզում է, որ հիշյալ դավառներից և ոչ մեկը չի մտել Մարդպետական իշխանության տիրույթների մեջ։ Հիշյալ դավառներից արքունի չէին աներկբայորեն Ռշտունիքը (չնայած հայտնի է, որ Տիրանի օրոք Ռշտունիքը հարքունիս գրավվեց) և Արտաղը։ Պալունիքը, Գուգանը և Արտաշեսյանը նախապես արքունի կալվածքներ պետք է լինեին և նոր միայն ժամանակի ընթացքում վերածվեին նախարարությունների։

Մարդպետությունը IV դ. կարևոր նշանակություն ուներ Մեծ Հայքի թագավորության քաղաքական կյանքում։ Չնայած տեղեկությունների բացակայությանը, պետք է ենթադրել, որ այն, ինչպես արդեն ակնարկել ենք, մեծ կարևորություն էր ներկայացնում նաև նախորդ դարերում։ Գրիգոր Լուսավորչին հայոց քահանայապետ օծվելու համար Կեսարիա ուղեկցող 16 նշանավոր իշխանների շարքում Ագաթանգեղոսը հիշատակում է «իշխանն Մարդպետութեան իշխանութեանն՝ Անգեղ-տան իշխանից և Աղձնեաց բդեշխից անմիջապես հետո»[28]։ Տիրան թագավորի օրոք Աղբիանոսյան Շահակ եպիսկոպոսին կաթողիկոս օծվելու համար Կեսարիա ուղեկցող իշխաններին հայոց արքայի հրամանով գլխավորում էր Մարդպետության իշխանը[29]։ Նույն Տիրան թագավորի իշխանության տարիներին Հայր-մարդպետի հորդորանքով գրեթե բնաջինջ են արվում Արծրունյաց և Ռշտունյաց իշխանական տները, իսկ նրանց կալվածքները հարքունիս են գրավվում[30]։ Արշակի գահակալության շրջանում Հայր-մարդպետը պատրաստվում էր հայոց Ներսես կաթողիկոսին պատկանող Աշտիշատի շրջակայքը հարքունիս գրավել և այնտեղ «շինել զապարանս արքունի»[31], սակայն սպանվում է Արծրունիների վերջին շառավիղ Շավասպ իշխանի կողմից։ Դղակ Հայր-մարդպետը Պապի իշխանության սկզբում Գանձակ քաղաքում նշանակվում է սահմանապահ, բայց շատ չանցած պարսից արքունիքի հետ գործարքի մեջ մտնելու համար մահապատժի է ենթարկվում հայոց թագավորի կողմից[32]։ Հայր մարդպետը հիշատակվում է նաև Պապի սպանությունից առաջ և հետո՝ որպես թագավորության նշանավոր իշխաններից մեկը[33]։ Մեսրոպ Վայոցձորեցին նրանց կոչում է «Հայր Մարդպետութեան տանն, որ թագաւորահայրն կոչեն»[34]։

Լինելով ներքինիներ և հնարավորություն չունենալով ժառանգական իշխանություն հիմնադրելու, մարդպետները հանդես էին գալիս որպես թագավորական ուժեղ իշխանության ջատագովներ[35], աշխատելով ոչնչացնել կենտրոնախույս, ինչպես նաև կարևոր մայրուղիների վրա գտնվող, ստրատեգիական մեծ կարևորություն ունեցող նախարարությունները։ Ելնելով նրանց վարած քաղաքականությունից, ինչպես նաև մի շարք ուղղակի և անուղղակի տվյալներից, հակված ենք կարծելու, որ հայր-մարդպետները օժտված են եղել նաև ոստիկանական իրավասությամբ և այդ իսկ պատճառով մարդպետական զորաջոկատը չի մտել նախարարական զորացուցակի՝ «Զորանամակի» մեջ[36]։ Հավանաբար այս բոլորի հետ մեկտեղ հայր-մարդպետները թագավորի մերձավոր խոր-

---

27 «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ», Կոստանդնուպոլիս, 1852, էջ 282—283։

28 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 414—415։

29 Փավստոս Բուզանդ, էջ 45։

30 Նույն տեղում, էջ 46—47։

31 Նույն տեղում, էջ 114։

32 Նույն տեղում, էջ 203—205։

33 Նույն տեղում, էջ 217—218, 233։

34 «Մոփերք Հայկականք», Զ, էջ 25։

35 J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 58—70։

36 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 251—252։

հրդականն էին ներքին քաղաքականության հարցերում, ինչպես նաև թագավորական դատարանը[37]։

Մարդպետական իշխանությունը Պատմահոր նշած սահմաններում մի առանձնահատուկ կուսակալություն էր, որը ժառանգական բնույթ չուներ և չէր էլ կարող ունենալ՝ Անգեղտան իշխանության նմանությամբ։ Բնութագրելով հայր-մարդպետների գործունեությունը, Հ. Մանանդյանը նշում է, որ Փավստոս Բուզանդը, որպես հայ ավատատերերի կուսակցության պատմագիր և նրանց դասային շահերի արտահայտիչ, խորապես ատում է մարդպետներին և պախարակում նրանց գործունեությունը[38]։

Պարզելով Մարդպետական գործակալության իրավասության շրջանակները, ստիպված ենք արձանագրել առաջին հայացքից կարծես թե անբացատրելի մի իրողություն. իսկ չէ որ՝ համաձայն Փավստոս Բուզանդի, նմանօրինակ իրավասություն ունի նաև Անգեղտան իշխանը։ Այդ մասին, ինչպես վերը տեսանք, Փավստոս Բուզանդը գրում է, թե Անգեղտան իշխանը «լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի, որ ի կողմանս յայնս. սոյնպէս և յերկրին Սոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն»[39]։ Ղ. Ինճիճյանը փորձում է հարցը լուծել Անգեղտան իշխանների և Մարդպետների նույնացման ճանապարհով, որ իբր Անգեղտան իշխաններից շատերը եղել են Մարդպետ կամ Հայր իշխան[40]։ Իրականում վերոբերյալ հիշատակությունից աներկբա է դառնում, որ Հայր-մարդպետի վերակացությունը հայկական թագավորության արևմտյան մասերում պահվող գանձերի վրա չէր տարածվում։ Հետևաբար պետք է պարզել, թե ինչ սկզբունքով էր տեղի ունենում այս երկու իշխանությունների իրավասությունների ոլորտի տարածքային սահմանազատումը։ Անգեղտան իշխանի ենթակայության ներքո գտնվել են, համաձայն հիշյալ տեղեկության, Անգեղ բերդն իր շրջակայքով, նրա մոտակայքում գտնվող արքունի բերդերը, ինչպես նաև Սոփաց աշխարհի Բնաբեղ բերդը։ Պատմաաշխարհագրական քննությունը ցույց է տալիս, որ Անգեղտան իշխանի վերակացության ներքո գտնվող տարածքը համապատասխանում է Սոփաց թագավորության Մեծ Հայքի կազմի մեջ մտած տարածքին։ Հիշյալ հանգամանքն ուսումնասիրողին ստիպում է կրկին անդրադառնալ փավստոսյան վկայության ներքոհիշյալ հատվածին. «Եւ քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում հայրն կոչէին՝ ներքինեաց գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ...»[41]։ Պարզվում է, որ Անգեղտան իշխանը Հայր-մարդպետի պես ներքինի էր և արքունի գործակալ, որի գործողությունների շրջանակը գրեթե ծածկում է Հայր-մարդպետի իրավասությունները։ Հարց է ծագում, թե հայոց արքունիքն ի՞նչ շարժառիթներով է ստեղծել այս համանման երկու գործակալությունները։ Մեր կարծիքով դրանց գոյությունը պատմական զարգացման արդյունք է։ Տրամաբանական է կարծել, որ «Գազոֆիլակոսի» գործակալական պաշտոնը գոյություն ուներ ոչ միայն հելլենիստական Մեծ Հայքում, այլև անհամեմատ հելլենականացված Սոփաց թագավորությունում։ Տիգրան Մեծի կողմից Սոփաց թագավորությունը Մեծ Հայքին միացնելուց հետո հայոց արքունիքը, հավանաբար, ռազմաքաղաքական որոշակի նկատառումներով չի վերացնում Սոփքի գործակալությունը և լոկ սահմանազատում է Մեծ Հայքի «գազոֆիլակոս» Հայր-մարդպետի և Սոփքի գա-

---

37 Ա. Գ. Սուքասյան, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма, Ереван, 1963, с. 223.

38 Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 65—66։

39 Փավստոս Բուզանդ, էջ 206։

40 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 139։ Ն. Ադոնցի կարծիքով, արքունի ամրությունների պահպանությունն ու վերակացությունը Սոփքում և Անգեղտանը վստահված էին մարդպետներին (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 470).

41 Փավստոս Բուզանդ, էջ 206։

ղոֆիլակոս Անգեղտան իշխանի գործունեության տարածքը։ Ինչպես Մարզպետական իշխանությունը, այնպես էլ Անգեղտան իշխանությունը արքունի կալվածք էր։ Այդ մասին Փավստոս Բուզանդը գրում է. «Հարկաներ (Մուշեղ Մամիկոնյանը—Հ. Բ.) և յԱնգեղ տունն զբաղոմս, և հանէր ընդ սուր։ Բայց աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան»[42]։ Անգեղտան արքունի տիրույթ լինելու մասին անուղղակի վկայություն է այն, որ Արշակ Բ թագավորը «ի կողմանսն ստորին գաւառացն յԱնգեղ տան էր յուտեստ»[43]։ Իսկ ինչ վերաբերում է Փավստոս Բուզանդի այն տեղեկությանը, թե պարսիկները «...գային պահ արկանեին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնկեղ տանն գաւառին. վասն զի էին բուղում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանց Արշակունեաց. բազում զանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ»[44], ապա հնարավոր է, որ մի քանի Արշակունի գահակալներ իրոք թաղված են եղել Անգեղ բերդում։ Սակայն մեր կարծիքով, Փավստոս Բուզանդը Մովսես Խորենացու նմանությամբ Հայաստանում միայն գիտի Արշակունիների հարստությունը, ուստի նշված հիշատակության մեջ ըստ երևույթին խոսքը ոչ թե պարզապես Արշակունիների, այլ Նոփաց թագավորների գերեզմանների մասին է։

Մեծ Հայքի թագավորության անկումից հետո երկու գործակալություններ գոյության անհրաժեշտությունն էլ վերացավ։ Սակայն դրանց ճակատագրերը տարբեր ձևով դասավորվեցին։ Անգեղտունը վերածվեց ինքնավար սատրապության Բյուզանդական կայսրության կազմում, իսկ Մարզպետի իրավունքը պարսից արքունիքի կողմից հանձնվեց Սասանյանների հովանավորությունը վայելող Արծրունիներին[45], որի հետևանքով Արծրունիները կամաց-կամաց իրենց իշխանությունը հաստատեցին Վասպուրականի մեծ մասում։ Սակայն բուն Մարզպետական իշխանությունը, որի տարածքում պետք է գերակշռող հանդիսանար իրանական տարրը հանձին մարական ցեղերի, ժամանակի ընթացքում դուրս մնաց Արծրունիների իշխանությունից և արարական տիրապետության շրջանում կորցրեց իր գիմագիծը։ Մարզպետական իշխանությունից ավելի երկար գոյատևեց Մարզպետական եպիսկոպոսությունը, որի կենտրոնը դառնում է Նախճավան քաղաքը։

ВЕДОМСТВА МАРДПЕТУТЮН И АНГЕХТУН В АРШАКИДСКОЙ АРМЕНИИ

БАБКЕН АРУТЮНЯН

Резюме

При царском дворе Аршакидской Армении особое место занимало ведомство հայրուտյուն (отцовство) или Мардпетутюн, соответствовавшее ведомству в эллинистическом мире, должностное лицо которого называлось γαζοφύλακος. В компетенцию мардпета входили управление царским дворцом, охрана царицы, царской семьи и государственной казны, осуществление надзора за охраной царских имений и крепостей. Мардпеты выполняли также полицейские функции, опираясь на

42 Նույն տեղում, էջ 212։

43 Նույն տեղում, էջ 140։

44 Նույն տեղում, էջ 142։

45 Մանրամասն տե՛ս Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի («Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 3, էջ 130—138)։

специальный отряд всадников, известный под наименованием «мардпетакан гунд». Будучи евнухами и не имея возможности основать свой наследственный род, они преданно поддерживали царскую власть в ее борьбе с сепаратизмом нахараров, за цантрализацию страны, ослабление церкви и частичную конфискацию церковных земель. Приблизительно такими полномочиями был наделен также князь Ангехтуна в юго-западных областях Великой Армении. Как выясняется, в эпоху существования Цопкского Армянского царства князья Ангехтуна выполняли в нем функции γαζοφύλακος-а и сохранили их после присоединения Цопка к царству Великой Армении.